«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Երևանի հ.98 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Ներսիսյան Արմինե

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

1.1 Էքսկուրսիայի նախապատրաստումը և կազմակերպումը մանկապարտեզում 5

1.2 Էքսկուրսիայի նպատակը և էքսկուրսիայի թեման որպես երեխայի զարգացման պայման 6

Եզրակացություն 10

Օգտագործված գրականության ցանկ 11

Ներածություն

<u>Թեմայի արդիականությունը:</u> Կրթության բնագավառում կարևոր դեր է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը: Դա բարոյագիտական վերաբերմունքի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ գործընթաց է: Դաստիարակի առջև դրվել է կարևոր խնդիր դաստիարակել գեղագիտական դաստիարակություն: Այսօր ընտանիքի, մանկապարտեզի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից, ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ռիթմը, ներդաշնակությունը, համաչափությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը գիտակցի, որ իրենք ևս բնության մի մասնիկ են, և պետք է ենթարկվեն այն կարգ ու կանոնին, որ տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց համար պետք է լինի խնամքի և պաշտպանության առարկա և նրա վերականգնման համար անձնական պատասխանատվություն բոլորն են կրում: Աշխարհի հետ փոխհարաբերության, մշակույթի ստեղծման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր բարոյական հասունացումը և նպաստում է նրա և բնության միջև ունեցած հարաբերությունների ներդաշնակությանը: Մշակույթը, մարդու կենցաղի այն բնագավառն է, որտեղ պետք է փնտրել բնապահպանական հիմնախնդիրների պատասխանները, քանի որ նրա հիմնավորման մեջ է ընկած բնության իմաստավորման արժեքները:

Աշխարհի հետ փոխհարաբերվելու լավագույն մեթոդը այսօր էքսկուրսիաների կազմակերպումն է: Անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել դիտել շրջապատի բոլոր երևույթներն ու առարկաները, նույնիսկ այնպիսիք, որոնք նախօրոք պլանավորված չեն; Ավելին՝Դաստիարակը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները պարտավոր է ցուցադրել երեխաներին և խթանել, որ եզրահանգումներ կատարեն: Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է

երեխայի կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ: Էքսկուրսիան դաստիարակին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը: Այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում շրջապատի ու ընդհանրապես հայրենի երկրի բնության նկատմամբ:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերըերեխաների զարգացման գործում: Հետազոտության նպատակից ելնելով առաջ են քաշվել հետևյալ խնդիրները ուսումնասիրել սովորողների էկոլոգիական դաստիարարկության առանձնահատկությունները,

- բացահայտել էքսկուրսիայի նախապատրաստումը և կազմակերպման գործընթացը մանկապարտեզում,
- ուսումնասիրել էքսկուրսիայի նպատակը և էքսկուրսիայի թեման որպես երեխայի զարգացման պայման
- վեր հանել էքսկուրսիրայի ազդեցությունը երեխայի զարգացման և դաստիարակության վրա:

1.1 Էքսկուրսիայի նախապատրաստումը և կազմակերպումը մանկապարտեզում

Հնուց ի վեր էքսկուրսիաները բազմազան են իրենց բովանդակությամբ ու պրիոմներով:

Էքսկուրսիաներին, որպես կանոն, հատուկ է մի ընդհանուր գիծ՝ նրանց թեմատիկությունը: Էքսկուրսիաների թեմաները կարող են լինել կամ ավելի լայն, կամ մասնագիտացված, էքսկուրսիոն թեմատիկան չպետք է անշարժ լինի, մեկ ընդ միշտ տրված: Էքսկուրսիաների թեմատիկան կախված է այն բանից թե դեպի ուր է կազմակերպված էքսկուրսիան:

Դաստիարակը ինքն է որոշում հարցերը, հաճախ չկանխատեսված ծրագրով և դասագրքով, հաճախ ընդհանրապես ոչմի կապ չունեցող ծրագրի և դասագրքի հետ: Նյութի բնույթն ու ծավալը, օբյեկտները վերջիններիս ուսումնասիրության հաջորդականությունը երթուղին, էքսկուրսիայի տևողությունը:

Նախապես դաստիարակ-էքսկուրսավարին անհրաժեշտ է ծանոթանալ թանգարանի ցուցանմուշներ հետ, պատմա-ճարտարագիտական հուշարձանների, պատմական և հեղափողապատմական տեղանքների հետ:

Էքսկուրսիաները ունեն հսկայական նշանակություն, գրել է Կրուպսկայան, ոչ միայն այն դեպքում, երբ նրանք լավ են կազմակերպված չեն հանդիսանում միայն ժամանց, զվարճանքի միջոցներ:

Հեռավոր էքսկուրսիաները հաճախ վարում են դաստիարակները և երեխաները: Ճանապարհին երեխաները հանդիպում են շատ հետաքրքիր հին կալվածքներ, պատմական վայրեր: Դրանց կողքին միշտ կարելի է գտնել մեկին, որը ինչ-ինչ տեղեկություններ կարողանում է տալ: Դաստիարակները քաջ տեղյակ լինելով իրենց երեխաների հետաքրքրություններին հնարավորություններին և յուրահատկություններին, ավելին քան որևէ մեկը

կարողանում ենկապել էքսկուրսիոն նյութը ուսուցանվող նյութի հետ, ողջ ուսումնադաստիարակչական պրոցեսի հետ[1]:

Էքսկուրսիայի մեթոդները- դաստիարակի աշխատանքի ձևերը, որոնց միջոցով հասնում են լավագույն արդյունքի, ձևավորվում է երեխայի աշխարհահայացքը, ստեղծագործական մտածելակերպը: Նրանք համակում են ոչ միայն դաստիարակ-էքսկուրսավարին, այլև երեխաներին, զարգացնելով նրանց ունակությունները ինքնուրույն ընկալման և զարգացման համար:

Էքսկուրսիայի մեթոդները համակում են թե սաներին, թե դաստիարակներին:

1.2 Էքսկուրսիայի նպատակը և էքսկուրսիայի թեման որպես երեխայի զարգացման պայման

Դաստիարակը միշտ պետք է ունենա որոշակի նպատակ, որի համար անց է կացվելու էքսկուրսիան: Էքսկուրսիայի նպատակը կայանում է առաջին՝պատմական նոր նյութերի հաղորդում ունեցած տեղեկությունների ամրապնդու, երկրորդը աշխատանքի նկատմամբ պատասխանատվության, հայրենասիրության, ինտերնացիոնալիզմի ձևավորում:

Էքսկուրսիոն գործի գիտակ Ն.Պ.Անցիֆելովը այդ պրոցեսը համար է» փրփուրներ հավաքել» և կարող է երեխայի գլխում առաջացնել խառնաշփոթ:

Պետք է ունենալ որոշակի թեմա, որը կունենա ենթաթեմա, որոնք պետք է լուսաբանել էքսկուրսիայի ընթացքում: Թեմայի ընտրության ժամանակԴաստիարակը պետք է լուծի նաև այն հարցը թե որքանով ընդրկված թեման հնարավոր է լուսաբանել էքսկուրսիայով:

---

[1] Բալյան Ա., Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները, Եր. 1982, էջ 89-93:

Էքսկուրսայի օբյեկտների ընտրության, երթուղու ընտրության աշխատանքը կատարվում է նախապես: Այն պետք է համապատասխանի էքսկուրսիայի նպատակին և թեմային ընդգրկելով իր մեջ կարևորագույն օբյեկտները: Էքսկուրսիայի երթուղին պետք է լինի հավաք: Չի կարելի իրարից շատ հեռու օբյեկտներ ընդգրկել, հակառակ դեպքում մի օբյեկտից մյուսը հասնելը ստեղծում է անհարմար վիճակ՝ հոքնածություն, տպավորությունների մասնատվածություն: Եթե օբյեկտները այնուամենայնիվ իրարից հեռու են, այն այցելել առանձին-առանձին: Երթուղին պետք է կառուցել թեմատիկ, ժամանակային հատվածներում:

Էքսկուրսիայի տևականությունը պետք է համապատասխանի երեխաների տարիքային հնարավորություններին /3-5 տարեկան/ ավտոբուսային էքսկուրսիաները համապատասխանաբար 1.5-2, 2.5-3 ժամ:

Ցուցադրական նյութով ծանրաբեռնված թանգարանների էքսկուրսիաների տևողությունը չպետք է գերազանցի - ցածր դասարաների համար 1ժ., 1ժ.15րոպե, VI-VIIIդաս. 1ժամ 15 րոպեից- 1 ժամ 30րոպե:

Երբ մարշրուտը կազմված է, պետք է որոշել, որ կանգառներում կցուցադրվեն օբյեկտները, ճշտել նրանց մասին եղաց նյութը, անցումները, ընդանրացումը: Անհրաժեշտ է, որ օբյեկտների ցուցադրումով, բացատրություններով տեղավորվել տրված ժամանակահատվածում: Անհրաժեշտ է մտածել ընդմիջումներ, որոնց ժամանակ սովորողները կարող են հանգստանալ, մտքերի փոխանակություն անել:

Անցնելով որոշակի նյութ, դաստիարակը նախնական կրկնություն-ամփոփում անցկացնելուց առաջ կազմակերպում է էքսկուրսիա, որինպատակն է-ամփոփիչ և համոզիչ դարցնելձեռք բերված գիտելիքները: Նմանէսկուրսիաները անց են կացվում մինչ ամփոփիչ դասը: Դասի փոխարենԴաստիարակը անց է կացնում էքսկուրսիա, որի նպատակն է՝ երեխաներին նոր գիտելիքներ տալ և ամփոփել թեման: Որոշ դաստիարակներ էքսկուրսիան անց են կացնում նախապես, որի նպատակն է երեխային մտցնել

իրադարցությունների, փաստերի շրջանակ, որը կօգնի ուսումնական նյութը ընկալելու:

Արդի ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագի-տական, էկոլոգիական զարգացման գործընթացները, սանական կոլեկտիվների գործունեությունը, արտադասարանային, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը: Դաստիարակության բովանդակության համակարգի մեջ կարելի է ընդգծել տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, նաև կրոնաբարոյական դաստիարակությունը: Դաստիարակության բովանդակությունն ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն: Դաստիարակության բովանդակությունը ներառում է կոլեկտիվիստի, քաղաքացու, ապագա ընտանիքի ղեկավարի, անձի գործնականության, նախաձեռնողականության, գործարարության ձևավորումը և այլն:

Էքսկուրսիայի նպատակն է մանկապարտեզի երեխաներին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևոր օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից երեխաների մեջ դաստիարակել պատասխանատվություն իրենց շրջապատող միջավայրի նկատմամբ, իսկ դրա ուսուցումը հնարավոր է հիմնականում սովորողների ճանաչողական գործընթացում: Էքսկուրսիոն հասկացությունների ձևավորման և զարգացման աշխատանքըԴաստիարակը սկսում է կատարել բուսաբանության հենց առաջին դասերին: Դրա համար էքսկուրսիայի ակզմակերպկման և այդ ընթացքում հարցերի ուսումնասիրումը պետք է սկսել ոչ թե բույսերի պահպանությունից, այլ» անթրոպոգեն գործուններ» հասկացությունից: Անհրաժեշտ է մի քանի օրինակներով ցույց տալ բուսական

համակեցությունների օգտագործման մասշտաբները մարդկության կողմից: 5րդ դասարանի կենսաբանության դասընթացը որոշակի հնարավորություններ է տալիս էկոլոգիական գիտելիքների ձևավորման համար՝հենվելով բուսական օրգանիզմի, նրա կյանքի, բույսերի բազմազանության հիմնական հասկացությունների վրա:

Դաստիարակը պետք է ընդգծի, որ բուսական աշխարհի պաշարները առայժմ լրիվ բացահայտված և ուսումնասիրված չեն և արգելոցների ու արգելավայրերի ստեղծումը պայմանավորված է բուսական համակեցությունների ու կենդանական տեսակների պահպանությամբ: Էքսկուրսիայի կազմակերպման և ուսուցման նման ձևը նպաստում է ծրագրային նյութի յուրացմանը, գիտական գիտելիքների ձեռքբերմանը և ամրապնդմանը, էկոլոգիական կրթության ու դաստիարակության իրականացմանը: Ահա թե ինչու դաստիարակը երեխաներին պետք է ծանոթացնի էքսկուրսիայի տեղի բուսականության ավելի տիպիկ, ինչպես նաև հազվագյուտ և անհետացնման եզրին կանգնած տեսակների հետ: Երեխաները պետք է պատկերացում ունենան հազվագյուտ և անհետացող տեսակների նկատմամբ ձեռք առնվող միջոցառումների մասին: Էքսկուրսիային մեծապես նպաստում են մանկապարտեզում ճաշակով կահավորված կենսաբանության կաբինետը, կենդանի անկյունը, մանկապարտեզամերձ հողամասը: Դասագրքից դուրս փաստական նյութի և օրինակների օգտագործումը բարձրացնում է էկոլոգիական գիտական գիտելիքների մակարդակը, աճում է հետաքրքրությունը կենսաբանության նկատմամբ:

Եզրակացություն

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլև խոսքի զարգացման ու մշակման համար: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները ամենից ավելի հաջող շարադրություններ գրում են էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը հնարավորություն են տալիս կառուցվածքով կուռ, բառապաշարով հարուստ և լեզվաոճական տեսակետից անթերի շարադրություններ կազմելու: Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար և այլն):

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ նախադպրոցական հաստատությունից դուրս իրենց պահելու դաստիարակի կարգադրությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն: Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն: Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Լ., Սարգսյան Ա. Երեխաների էկոլոգիական կրթության տեսություն Երևան 2005.
2. Բալյան Ա., Աշակերտների ճանաչողական պահանջմունքները և դրանց ձևավորման ուղիները, Եր. 1982.
3. Եսիպով Բ.Պ., Ն.Կ.Գոնչարով, «Մանկավարժություն» Երևան 1948.
4. Հանրագիտարան, հատոր1» Ի՞նչ է, ո՞վ է» Երևան 1984.
5. Մարուխյան Լ., Հովսեփյան Ա,» Անձի էկոլոգիական կուլտուրան» Երևան 2006.
6. Букатов В. М. , Педагогические таинства дидактических игр., М., 2003.